Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կ. Մարդանյանի անվան Բերդի թիվ 3 հիմնական

Թեմա՝ Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Նունե Ղուկասյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ……3

Գլուխ 1. Իրավունք և ազատություն, պատիվ և

արժանապատվություն հասկացությունները……6

Գլուխ 2. Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և

արժանապատվության պաշտպանությունը առարկայի

դասավանդման ընթացքում ……12

2.1. Հետազոտական աշխատանքի ընդհանուր բնութագիր ……12

2.2. Հետազոտության արդյունքների ամփոփում ……15

Եզրակացություն ……22

Գրականության ցանկ ……...24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անքակտելի և անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից: Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը: Արժանապատվությունը սկզբունք է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում: Շատ կարևոր է դասավանդման ընթացքում սովորողների մեջ սերմանել պատիվ և արժանապատվություն, իրավունք և ազատություն: Դրա արդյունքում սովորողի մեջ բարձրանում է պատասխանատվության գիտակցումը:

Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց զատ՝ արժանապատվությունը նաև բարոյագիտական հասկացություն է: Սեփական արժանապատվության ըմբռնումը, խղճի և պատվի հետ միասին, հանդիսանում է մարդու՝ ինքն իր առջև որպես պատասխանատվության գիտակցման եղանակներից մեկը: Մյուս կողմից՝ անձի արժանապատվությունը մյուս մարդկանցից պահանջում է հարգել անհատին, ճանաչել նրա համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները:

Արժանապատվությունն է սովորողների մեջ ծնում պատասխանատվության զգացումը: Այդ իսկ պատճառով այն բոլոր ժամանակների համար արդիական թեմա է: Արժանապատվության զգացումը մարդկանց պարտավորեցնում է հարգել դիմացինին և նրա իրավունքները: Այստեղ տեղին է նշել էթիկայի ոսկե կանոնը. ‘Դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեին’:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել արժանապատվություն, պատիվ, իրավունք հասկացությունները:
2. Ուսումնասիրել և վերլուծել սովորողների իրավունքների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում:
3. Ուսումնասիրել <<Իրավունք և պարտականություն>> թեման <<Ես և շրջակա աշխարհը>>առարկայի շրջանակներում /2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններում/:
4. Իրականացնել արդյունքների ամփոփում և վերլուծություն, կազմել եզրակացություն:

Այս գործում անչափ կարևոր է նաև ուսուցիչների մասնակցությունը, քանի որ երեխաների՝ որպես անհատականությունների կայացման գործում չափազանց անգնահատելի է ուսուցչի դերը:

Հետազոտության վարկածը՝

Մենք կարծում ենք, որ սկսած 1-ին դասարանից առարկայի դասավանդման ընթացքում պարտադիր է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը :

Հետազոտության մեթոդները՝ զրույց-քննարկում, դիտարկում, համեմատում:

Հետազոտության ընտրանքը՝ տարրական դպրոցի աշակերտներ:

Ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով /ՀՀ երեխայի իրավունքի մասին, հոդված 11, <<ՄԱԿ-ի կոնվենցիա երեխայի իրավունքների մասին, հոդված13, 27, <<Հանրակրթության պետական չափորոշիչ>>, <<ՀՀ օրենքը հանրակրթության մասին>> նյութերը, Гребенюк О.С., Рожков М.И. <<Общие основы педагогики>>, Է. Բեկման և Բ . Թրաֆորդ <<Դպրոցների ժողովրդավարական կառավարում>> գրքերը, Լ. Ալեքսանյան, Հ. Անտոնյան <<Ես և շրջակա աշխարհը 2>> , Ն. Թորոսյան, Լ, Ալեքսանյան << Ես և շրջակա աշխարհը 3>>, Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան <<Ես և շրջակա աշխարհը 4>> դասագրքերը, և մի շարք էլեկտրոնային աղբյուրներ՝ սույն

աշխատանքում ներկայացրել եմ <<Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում>> թեման:

Գլուխ 1. Իրավունք և ազատություն, պատիվ և արժանապատվություն հասկացությունները

Յուրաքնչյուր հասարակության և պետության ապագան երեխաներն են՝ մատաղ սերունդը: Ի սկզբանե այդ երեխաներն օժտված են **իրավունքներով,** և պետությունները պարտավոր են պաշտպանել երեխայի իրավունքները: Իսկ երեխաների իրավունքները պաշտպանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բարձրացնել երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Յուրաքանչյուր ոք, առաջին հերթին՝ երեխաները, ծնողներն ու երեխաների հետ աշխատող մեծահասակներն ունեն երեխայի իրավունքներն ուսումնասիրելու կարիք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թե՛ երեխաներին և թե՛ մեծահասակներին հրաշալի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու երեխայի իրավունքները:

Կոնվենցիայի չորս ուղենիշային սկզբունքները «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի չորս հոդվածներ, որոնք հայտնի են որպես Կոնվենցիայի ուղենիշային սկզբունքներ, հատուկ ուշադրության են արժանացած: Այդ չորս սկզբունքները (հոդվածները) նպատակաուղղված են ապահովելու Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների լիակատար և արդյունավետ կիրառումը: Երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովումն ու նրանց իրավունքների պաշտպանությունը կախված է նրանից, թե ինչպես են ապահովվում Կոնվենցիայի այդ չորս հիմնաքարային սկզբունքները: Այդ չորս սկզբունքները լիովին նոր վերաբերմունք են ձևավորում երեխաների նկատմամբ՝ դարձնելով Կոնվենցիան էթիկական ու գաղափարական արժեքավոր հարթություն: Սկզբունքների հիմքում ընկած հիմնական գաղափարն այն է, որ երեխաներն անհատներ են: Իսկ երեխաների խաղալու իրավունքի ամրագրումը կարծես հաստատում է մանկության արժեքը և օգնում չմոռանալ, որ այդ շրջանը կարևոր նախապատրաստական փուլ է յուրաքանչյուր մեծահասակի համար:

1. Առանց խտրականության բոլոր երեխաներն օժտված են նույն իրավունքներով և երբեք չպետք է ենթարկվեն խտրականության: Երեխաներին հավասար հնարավորություններ տրամադրելու պարտավորությունը սահմանվում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածում. «Մասնակից պետությունները հարգում և ապահովում են Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար՝ առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից»:
2. Երեխայի լավագույն շահերը Երեխաների հետ կապված բոլոր գործողություններում առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Բոլոր չափահաս անձինք պետք է անեն այն, ինչը լավագույնն է երեխայի համար, որոշում ընդունելիս նրանք պետք է մտածեն, թե իրենց որոշումներն ինչպես կազդեն երեխայի վրա: Երեխայի շահերը բոլոր դեպքերում գերակա են մեծահասակների, օրինակ՝ ծնողների, ուսուցիչների, խնամակալների շահերի նկատմամբ: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:
3. Կյանքի ու զարգացման իրավունք Երեխայի տնտեսական և սոցիալական իրավունքների հիմքում ընկած բանաձևը սահմանվում է երեխայի՝ կյանքի իրավունքն ամրագրող հոդվածում: Հոդվածը ոչ միայն խոսում է երեխայի ապրելու իրավունքի մասին, այլև սահմանում է նրա զոյատևման ու առողջ զարգանալու իրավունքը: 6-րդ հոդվածի 2-րդ մասում գրված է. «Մասնակից

պետությունները հնարավոր առավելագույն չափով պետք է ապահովեն երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը»:

4. Լսված լինելու իրավունք Կոնվենցիայի մյուս՝ չափազանց կարևոր, սկզբունքը հարգանքն է երեխայի կարծիքի նկատմամբ: Այս սկզբունքն ամրագրված է Կոնվենցիայի 12-րդ հոդվածում. «Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն»: Կոնվենցիայում առանձնահատուկ ընդգծվում է երեխայի ընտանիքի դերի, նրա հեղինակության ու պատասխանատվության կարևորությունը: Հռչակվում է, որ երեխան ունի ոչ միայն ընտանիքի լեզվի ու մշակույթի, այլև այդ լեզվի ու մշակույթի նկատմամբ հարգանքի իրավունք: Կոնվենցիան նաև կոչ է անում պետություններին օժանդակելու այն ընտանիքներին, որոնք չունեն իրենց երեխաների համար կյանքի արժանապատիվ մակարդակ ապահովելու հնարավորություն:

Իսկ հիմա նշենք, որ ՝Երեխաների իրավունքների մասին՞ Կոնվենցիայի 13 հոդվածում նշվում է.

1. Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ:
2. Այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումները կարող են լինել միայն այնպիսիք, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են. ա) այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ բ) պետական անվտանգությունը կամ հասարակական կարգը, կամ

բնակչության առողջությունը, կամ բարոյականությունը պաշտպանելու համար:

Շատ կարևոր է երեխաներին իրազեկել Հանրակրթության մասին ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները: Գլուխ 5-ի Հոդված 20-ում նշվում է. Սովորողի իրավունքներն ու պարտականությունները.

1. **Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ**: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:
2. **Սովորողն իրավունք ունի՝**

   ա) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

   բ) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

   գ) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

   դ) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

   ե) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

   զ) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

   է) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

   ը) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

   թ) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. **Սովորողը պարտավոր է՝**

ա) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

բ) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

գ) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

դ) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Պետք է նաև մանկավարժներր իրազեկվեն, որ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի Հոդված 27-ում նշվում է մանկավարժների իրավունքներն ու պարտականությունները, որի 2 կետում նշվում է.

Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

1) հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

2) նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները:

1996 թվականին ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը դարձավ Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտանության համակարգի ձևավորման հիմքը: «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1-ին հոդվածը հստակ ամրագրեց. «Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո»:

Ազատությունը գաղափար է, որը արտացոլում է անձանց վերաբերմունքը ինչ-որ գործողությունների նկատմամբ: Ըստ Շիլլինգի ազատությունը բարու և չարի տարբերակել կարողանալու հիման վրա ընտրություն կատարելու կարողությունն է: Էթիկայում ազատությունը կապված է մարդու մոտ կյանքի ազատության առկայության հետ:

Վերածննդի դարաշրջանում և հետագա դարերում ազատություն ասելիս հասկանում էին մարդու անհատականության անարգել, բազմակողմանի ուսումնասիրությունն ու բացահայտումը: Գերմանական կրոնի ու փիլիսոփայության մեջ, ազատության հարցը դիտարկվում է որպես մարդու բարոյաստեղծագործական բնույթի բացահայտում:

Սպինոզան ազատությունը սահմանում է որպես սեր Աստծո հանդեպ և Աստծո սերը մարդու հանդեպ: Սրանից մենք պարզ հասկանում ենք, թե որն է մեր փրկությունը կամ երանությունը կամ ազատությունը: Այն Աստծո հանդեպ մշտական և հավերժական սիրո կամ մարդու նկատմամբ Աստծո ունեցած սիրո մեջ է:

Մտքի ազատություն, խղճի ազատություն կամ գաղափարի ազատություն, այն հիմնարար սկզբունքներից մեկն է, որը բնորոշ է ժողովրդավարությանը: Այն ուրիշների կարծիքներից անկախ անձնական տեսակետ, կարծիք կամ մտքեր ունենալու անձի քաղաքական ազատությունն է:

Արժանապատվությունը այն հիմքն է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում: Այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Արժանապատվությունը ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը և հասարակության վերաբերմունքը իր հանդեպ, որտեղ ընդունվում է անձնավորության արժեքը: Այն զուտ մարդկային հատկանիշ է և ձեռք է բերվում մարդու զարգացման որոշակի շրջանում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ ‘Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են’: Յուրաքանչյուր մարդու այս իրավունքները

համարվում են բնական և անօտարելի: Մարդը այդ իրավունքներով օժտված է ի ծնե մարդկայինտեսակին պատկանելու շնորհիվ: Որոշ իրավունքներից մարդը չի կարող հրաժարվել անգամ ցանկության դեպքում:

Գլուխ 2. Սովորողի իրավունքների և ազատությունների պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում

2.1. Հետազոտական աշխատանքի ընդհանուր բնութագիր

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել արժանապատվություն, պատիվ, իրավունք հասկացությունները:
2. Ուսումնասիրել և վերլուծել սովորողների իրավունքների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում:
3. Ուսումնասիրել <<Իրավունք և պարտականություն>> թեման <<Ես և շրջակա աշխարհը>>առարկայի շրջանակներում /2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններում/:
4. Իրականացնել արդյունքների ամփոփում և վերլուծություն, կազմել եզրակացություն:

Այս գործում անչափ կարևոր է նաև ուսուցիչների մասնակցությունը, քանի որ երեխաների՝ որպես անհատականությունների կայացման գործում չափազանց անգնահատելի է ուսուցչի դերը:

Հետազոտության վարկածը. Մենք կարծում ենք, որ սկսած 1-ին դասարանից առարկայի դասավանդման ընթացքում պարտադիր է սովորողների

իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը :

Հետազոտության մեթոդները՝ զրույց-քննարկում, դիտարկում, համեմատում:

Հետազոտության ընտրանքը՝ տարրական դպրոցի աշակերտներ:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսումնական նպատակը սովորողների սոցիալականացումն է, աշխարհի ամբողջականության, բազմազանության և փոխադարձ կապերի նախնական պատկերացումների ձևավորումը, ինչպես ման մարդկանց բարոյաէթիկական նորմերին համապատասխան, չվնասող, անվտանգ, պատասխանատու, վարժ և հայրենասեր քաղաքացու նկարագիրն է: Մասնավորապես առարկան նպատակ ունի հիմքեր դնել և սովորողներին օգնել՝

- հասկանալ սեփական ինքնությունը որպես անձ և անհատականություն,
- ընդունել մարդուն որպես բարձրագույն արժեք, ընդունել իր հասակակիցներին՝ հարգելով նրանց առանձնահատկությունները, միմյանց նկատմամբ դրսևորել հարգալից և ոչ խտրական վարքագիծ,
- արդյունավետ հաղորդակցվել, հասկանալ, քննադատաբար վերլուծել տարբեր տեսակետներ, արտահայտել սեփական կարծիքը,
- հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, բանակցել և նախընտրել խաղաղ տարբերակներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց:

1. **Առարկայի հիմնական խնդիրներից է՝** անձնային, հաղորդակցական, ճանաչողական, ստեղծագործական բազմաբնույթ կրթական գործելակերպի զարգացումը:
2. **Առարկայի ընդհանուր բնութագիրը:** 7-10 տարեկանը լավագույն տարիքն է հետաքրքրությունների ձևավորման, հարցեր ձևավորելու և այդ հարցերի պատասխանը քննելու, վերլուծելու և գտնելու, ինչպես նաև համագործակցությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական

գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացման, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց և բնության նկատմամբ բարյացակամության, հոգատարության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այդ տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

՝Ես և շրջակա աշխարհը՝ առարկայի դասավանդման հիմնական սկզբունքներն են՝

- Առարկայի կրթության անհրաժեշտությունը բոլոր սովորողների համար
- Յուրաքանչյուր աշակերտի համար հասանելիության ապահովումը
- Առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցությունը
- Առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը:

՝Ես և շրջակա աշխարհը՝ առարկայի ՝Իրավունք և պարտականություն՝ բաժինը օգնում է երեխաներին գիտակցել իրենց արարքների հետևանքները, ինչից էլ ծնվում է էթիկայի և բարոյականության գաղափարները: Այս թեմայի ուսումնասիրությունը նպաստում է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությանը առարկայի դասավանդման ընթացքում: Դրանք են՝

1. Ուսումնասիրել ինքնության վերաբերյալ գաղափարներ, ներառյալ՝ իր և ուրիշների, տարբերել ինքնությունը՝ ըստ սոցիալական և հուզական առանձնահատկությունների:
2. Գտնել ինքնահաստատման և ինքնադրսևորման տարբեր եղանակներ:
3. Նշել սեփական կարողություններն ու հնարավորությունները, ինքնադրսևորվել:
4. Պահպանել դպրոցական համակեցության կանոնները, բերել մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական ազդեցության օրինակներ, հստակ արտահայտել ցանկություններն ու կամքը, ոչինչ թույլ չտալ առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն:

5. Կանխատեսել իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, գնահատել դրանք, ունենալ անձնական դիրքորոշում:
6. Նկարագրել և բերել իրենց առնչվող պարզ օրինակներ ազատության, արդարության և հավասարության, պատասխանատվության և հանդուրժողականության վերաբերյալ:

՝Ես և շրջակա աշխարհը՞ ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է ՝կառուցել՞ իր սեփական աշխարհը: Աշակերտների մեջ քայլ առ քայլ ձևավորվում է այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր ցանկություններից ու երազանքներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և ինչպես ինքը, այնպես էլ նրանք, արժանի են հրգանքի: Շփվելով տարբեր մարդկանց հետ՝ նրանք սովորում են օրինակելի վարքագիծ դրսևորել հասարակական վայրերում և ձեռք են բերում հաղորդակցման հմտություններ:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կրտսեր դպրոցականները հնարավորություն են ունենում գիտակցել շրջապատի մարդկանց հանդեպ հարգալից և ուշադիր վերաբերմունքի կարևորությունը /անկախ այդ մարդկանց տարիքից, սեռից, ազգությունից, հավատքից և առողջական խնդիրներից/:

՝Ես և շրջակա աշխարհը՞ առարկայի՝ որպես ինտեգրված առարկայի դեպքում կարող են կիրառելի լինել հետևյալ խաչվող հասկացությունները՝

1. Պատճառ և հետևանք
2. Անհատ և հարաբերություններ
3. Արդարություն և զարգացում:

2.2. Հետազոտության արդյունքների ամփոփում

6 տարեկան երեխան դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև իր ազատությունների ու

պատվի, արժանապատվության պաշտպանությունը: Այդ գործում շատ մեծ դեր ունի ուսուցիչը: Ուսուցչի հետևողական աշխատանքի և խիստ ուշադրության արդյունքում սովորողը կհասկանա և կկարողանա իր տարիքին համապատասխան հստակ պատկերացնել իր իրավունքներն ու պարտականությունները: Արդեն իսկ սեպտեմբերի 2-րդ կեսին իրենց տարիքին համապատասխան և իրենց ընդունակությունների սահմաններում երեխաների հետ կազմակերպվել է զրույց-երկխոսություն-բանավեճ: Միասին մշակել ենք ՝Մեր դասարանի կանոնները՝ և ողջ ուսումնական տարվա ընթացքում առավելագույնս հետևել ենք դրանց կատարմանը: Այդ տարիքում 1-ին դասարանցին պետք է հստակ իմանա, որ ինքը գնում է դպրոց սովորելու համար, որ ուսում ստանալը իր իրավունքն է: Նա պետք է հասկանա և կիրառի դասից չուշանալը, դասամիջոցին չվազվզելը, ընկերների նկատմամբ ուշադիր լինելը, ինչպես նաև սրտացավ վերաբերմունքն իր անձնական իրերի հանդեպ /տետր, գիրք, գրիչ, քանոն, մատիտ և այլն/: Ամբողջ տարվա ընթացքում փաստերով և օրինակներով աշխատանք է տարվել այդ գաղափարները զարգացնելու ուղղությամբ, ինչպես նաև հիմք է դրվել հետագա գործողությունների ու գաղափարների զարգացման համար: Ուսումնական տարվա վերջում 1-ին դասարանցին իր ընկալունակության սահմաններում պատկերացնում է իր իրավունքներն ու ազատությունները, պատվի և արժանապատվության պաշտպանությունը:

2-րդ դասարանում արդեն ՝ես և շրջակա աշխարհը՝ առարկայի դասաժամին երեխաները հստակ անդրադառնում են ՝Իրավունք և կոնֆլիկտ՝ թեմային: Թեման բաժանվում է մասերի՝



Աղյուսակ 1

1. **Արարք և հետևանք:** Նախ երեխաների հետ միասին անդրադարձանք <<Դասարանի կանոններ>>-ին: Նրանք աստիճանաբար սկսեցին գիտակցել, թե ինչու պետք է պահպանել դրանք: Այս ամենից հետո նրանք արդեն օրինակներով էին բացատրում, թե ինչպես կարող է կանոններին հետևելը ազդել ընկերական հարաբերությունների վրա և ինչ կարող է լինել կանոններին չհետևելու դեպքում: Դասի ժամանակ կատարեցինք խմբային աշխատանք: Յուրաքանչյուր խումբ դերային խաղով ներկայացրեց մի իրավիճակ: Քննարկման արդյունքում հնչեցին տարբեր կարծիքներ այն մասին, թե ով ինչպես կլուծի ներկայացված կոնֆլիկտը:
2. **Իրավունք և պարտականություն:** Մեկ անգամ ևս վեր ենք հիշում մեր իրավունքներն ու պարտականությունները: Ի՞նչ ենք հասկանում, երբ ասում ենք. ‘Ես իրավունք ունեմ’ կամ երբ ասում ենք. ‘Իմ պարտականությունն է’: Կատարեցինք խմբային աշխատանք և պատրաստեցինք պաստառ: Խմբերը նախօրոք պատրաստված ծրարների միջից ընտրում են որևէ նկար և փակցնում պաստառի համապատասխան վերնագրի տակ:

Նկար 1

Երեխաները հստակ պատկերացնում են, որ կան պահանջներ, որոնք, անկախ մեր կամքից, պետք է կատարենք: Դրանք մեր **պարտականություններն են**: Օրինակ՝ դասերին չխոսել և ուշադիր լինել, միջանցքում չգոռալ, դասասենյակում չվազվզել, որպեսզի փոշի չբարձրանա, աղբը գցել աղբամանը և այլն:

Երբ ցանկանում ենք հանգստանալ, խաղալ, կրթություն ստանալ, ապրել համերաշխ ընտանիքում, դրանք էլ մեր **իրավունքներն են**: **'Ես իրավունք ունեմ'** նշանակում է՝ ես կարող եմ անել: **'Ես պարտավոր եմ'** նշանակում է՝ ես պետք է անեմ:

Ամփոփելով թեման՝ երեխաներն արդեն կարողանում են իրենց սովորածը կիրառել տանը, դպրոցում և միջավայրում: Նրանք առանց դժվարանալու կատարեցին հետևյալ առաջադրանքը. 'Լրացրեք ձեր իրավունքների և պարտականությունների շարքերը':

Իմ պարտականությունները	Իմ իրավունքները
• Չուշանալ դասերից • Լինել պարտաճանաչ • Հարգել դիմացինին • ……	• Ուսում ստանալ • Հանգստանալ • Խաղալ • Օգտվել գրադարանից • ……

Աղյուսակ 2

Աշխատանքի ավարտին, որպես **վերջնարդյունք,** երեխաներն արդեն գիտակցում էին, որ ամեն մարդ իրավունք ունի լինել առողջ, պաշտպանված, ունի կրթություն ստանալու, մաքուր միջավայրում ապրելու, սնվելու, հանգստանալու իրավունք:

3-րդ դասարանում ուսումնասիրեցինք 'Իմ իրավունքներն ու պարտականությունները' և 'Վարք' թեման: Նախ անդրադարձանք 2-րդ դասարանում անցած նյութին. հիշեցինք, թե ո՞րն է մեր իրավունքը և ո՞րն է մեր պարտականությունը: Այնուհետև շարադրեցինք մեր մտքերը թեմայի վերաբերյալ: Մենք հաճախ ենք լսում. '**Դու պարտավոր ես**', '**Ես իրավունք ունեմ**', '**Դու իրավունք չունես**' արտահայտությունները, սակայն շատ հաճախ մոռանում ենք, որ մեր

իրավունքները կարող են խանգարել կամ վնասել դիմացինին: Այսինքն՝ եթե ես իրավունք ունեմ երաժշտություն լսելու կամ գնդակ խաղալու, ապա դա չպետք է խանգարի բակում խաղացող մյուս երեխաներին կամ տան անդամներին /քնած փոքրիկ քույրիկին կամ հանգստացող տատիկին/:

- Մենք պետք է միշտ հիշենք, որ մեր արարքները ոչ միայն մենք ենք գնահատում, այլ նաև ուրիշները:
- Մեր կատարած քայլերը տարբեր հետևանքներ կարող են ունենալ ոչ միայն մեզ համար, այլև շրջապատի համար:
- Երբեմն մեր որոշ արարքներ կարող են և վտանգավոր լինել:

Դպրոցն ու դասարանն այն վայրն է, որտեղ աշակերտն իրեն պետք է ապահով և լավ զգա: Այս նպատակով սովորողների հետ իրականացրինք քննարկում հետևյալ հարցերի շուրջ. ՝Կուզեի՞ք ընկերություն անել մեկի հետ, ով՝ ✋կոպտում է, ✋հրում է, ✋բամբասում է, ✋խռովում է, ✋կռվում է, ✋նեղացնում է, ✋խանգարում է, ✋ծաղրում է, ✋խաբում է՝: Եթե մենք այս բառերից յուրաքանչյուրի փոխարեն հակառակ բառ մտածենք, դա մեզ կօգնի, որպեսզի ունենանքհամերաշխ դասարան, որտեղ կլինենք ապահով և հարգված:

Մենք չպետք է մոռանանք, որ ամեն արարք իր արձագանքն ունի: Որևէ բան անելուց առաջ պետք է միշտ մտածենք, թե ինչ հետևանքներ այն կունենա: Երբեք թույլ չտանք մեզ կամ ուրիշներին վնասող արարք, ով էլ որ մեզ դրան դրդի:

Յուրաքանչյուրս ունենք մեր ուժեղ և թույլ կողմերը՝ ինչ-որ բան ավելի լավ ենք կարողանում անել, մի այլ բան էլ դժվարությամբ ենք կարողանում անել կամ ընդհանրապես չենք կարողանում: Եթե իրար օգնենք, դժվարությունները հեշտ կհաղթահարենք:

Եթե մենք չիմանանք բարեկրթության կանոնները, շատ հաճախ չենք կարող օգնել միմյանց, մեր արարքները կանոնավորված չեն լինի: Դրա համար մենք պետք է հստակ իմանանք և հետևենք մեր դասարանի կանոններին, որպեսզի խառնաշփոթ չլինի:

- ☺ Եթե ես ուզում եմ ունենալ մաքուր դասասենյակ, նախ ես պիտի հետևեմ իմ վարքին և աղբը հատակին չթափեմ, դասարանում չվազվզեմ:
- ☺ Եթե ուզում եմ շատ բն իմանալ, ապա պետք է դասին ուշադիր լինեմ, կարողանամ լսել և հասկանալ:
- ☺ Եթե ուզում եմ ընկերներ ունենալ, ապա պետք է հարգալից լինեմ նրանց նկատմամբ և նույնը ստանամ նրանցից:
- ☺ Եթե ուզում եմ դպրոցում ապահով լինեմ, ապա չպետք է դասամիջոցին արագ վազվզեմ և լուսամուտից չկախվեմ:

Այս և նման հարցերը վերլուծելով և պարզաբանելով կարողացանք ստեղծել մեր դասարանի կանոնների պաստառը: Կանոնների կատարմանը հետևողական էինք ուսումնական տարվա ընթացքում:

4-րդ դասարանում արդեն սովորողը գիտակցում և հասկանում է, որ իրավունք-պարտականություն, ինչպես նաև պատվի, արժանապատվության և ազատության պաշտպանություն ունեն ոչ միայն իրենք /ժողովուրդը/, այլև, ամենակարևորը, պետությունները: Յուրաքանչյուր պետություն իր և իր ժողովրդի համար մշակում է օրենքներ, որոնք կծառայեն ողջ հասարակությանը և հասարակության յուրաքանչյուր անդամին: Օրենքները կարգավորում են մեր կյանքը և ծառայում են մեզ: Այդ պատճառով էլ դրանք պարտադիր են բոլորի համար: Մենք էլ մեր հերթին պետք է լավ իմանանք օրենքները և հետևենք դրանց: Ոչ ոք չի կարող օրենքից բարձր լինել: Ամեն երկիր ունի իր հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես աշխարհի այլ պետություններ, ունի իր Սահմանադրությունը: Բոլորիս պարտքն է հարգել և ընդունել Սահմանադրության պահանջները:

Մեզանից յուրաքանչյուրն ունի **իրավունքներ**: Դրանք մեզ ոչ ոք չի նվիրել և ոչ ոք չի կարող մեզանից խլել: Օրինակ՝ յուրաքանչյուրս ունենք կյանքի, ազատության, բարեկեցության, կրթության, աշխատանքի և շատ ու շատ այլ իրավունքներ: Բայց երբ խոսում ենք մեր իրավունքների մասին, պետք է հիշենք, որ ունենք նաև պարտականություններ: Պետք է հիշենք նաև, որ մեր իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են: Օրինակ՝ մենք ոչ միայն **իրավունք**

ունենք հարգալից վերաբերմունքի, այլև **պարտավոր ենք** հարգել ուրիշներին: Կրթություն ստանալը մեր իրավունքն է, բայց այն միաժամանակ նաև մեր պարտականությունն է: Մենք պարտավոր ենք ամեն օր գնալ դպրոց, սովորել մեր դասերը, պահպանել դպրոցի ընդունած կանոնները:

Այսպիսով՝ մենք ունենք տարբեր պարտականություններ, բայց դրանցից ամենակարևորը ուրիշի իրավունքները հարգելու պարտականությունն է: Միայն այդ դեպքում մենք կարող ենք պահանջել, որ ուրիշներն էլ հարգեն մեր իրավունքները:

Երբեմն լինում են իրավիճակներ, երբ մարդկանց իրավունքները բախվում են: Մնան իրավիճակների մենք հանդիպել ենք մեր կարդացած հեքիաթներում: Օրինակ՝ ‘Ոսկու կարասը’ հեքիաթում: Դերային խաղով ներկայացրինք ոսկին գտնող գյուղացուն, հողի տիրոջը և թագավորին: Վերլուծության արդյունքում ունեցանք ազնիվ ու պատասխանատու հերոսների նկարագիր, իսկ խարդախ, ագահ ու ժլատ թագավորի նկատմամբ ձևավորվեց բացասական վերաբերմունք: Թագավորն իր հարստության հետ մենակ է և …

Այս հեքիաթի հերոսները կանգնած էին ճանապարհի խաչմերուկում և փորձում էին ընտրություն կատարել, թե որ ուղղությամբ գնալն է ճիշտ:

Սովորողներն արդեն որոշ չափով գիտակցում են, որ, չնայած նրան, որ իրենց կողքին կլինեն շատ ընկերներ, հարազատներ, բարեկամներ, այնուամենայնիվ, իրենց ապագայի ընտրությունն իրենց ձեռքերում է: Դրա համար նրանք այսօրվանից կսկսեն լինել աշխատասեր, կարգապահ, հաստատակամ, ճշմարտասեր և արդարամիտ:

Նկար 2

Եզրակացություն

Այսպիսով, մանրամասնորեն ուսումնասիրելով սովորողի իրավունքների և ազատությունների , պատվի և արժանապատվության պաշտպանությունը

առարկայի դասավանդման ընթացքում թեման և գործնականում կիրառելով այն, եկանք այն եզրակացությանը, որ սկսած 1-ին դասարանից առարկայի դասավանդման ընթացքում պարտադիր է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը :

Արդյունավետ ուսուցումն առանց սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության, ինչպես նաև պարտականությունների կատարման անհնար է: Բոլոր աշակերտները՝ անկախ մտավոր, ֆիզիկական, հոգեկան առանձնահատկություններից պետք է կարողանա <<օգտագործել>> իր իրավունքներն ու ազատությունները և մշտապես հիշի. << Իմ իրավունքներն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են դիմացինի իրավունքները>> : Օրենքները չիմանալը չի ազատում պատասխանատվությունից, ուստի անհրաժեշտ է աշակերտներին դեռ մանկուց իրազեկել հասարակական կարգ ու կանոնի, օրենքի, իրավունքի ու պարտականության, հավասարության և արդարության կարևորության մասին:

Լինելով արժանապատիվ սովորող՝ նա կարող է ուսուցման մեջ ապահովել հաջողություններ: Դասապրոցեսում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ սովորողը հաճույքով հաճախի դպրոց և, որ ամենակարևորն է, զգա, որ իր իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանված է: Այդժամ նա լիարժեք կկատարի իր պարտականությունները: Բնականաբար այդ ամենին հետևողն ու հիմնական նպաստողը ուսուցիչն է: Այսպիսի դասընթացները պահանջում են ավելի մեծ պատրաստվածություն: Այսինքն՝ բավարար չէ միայն բովանդակության մատչելի ներկայացումը, անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ սովորողը կդառնա դասապրոցեսի անմիջական մասնակիցը:

Դասավանդման ընթացքում կիրառելով զրույցի, քննարկման, դիտարկման և համեմատման մեթոդները՝ հանգեցինք նրան, որ սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը հնարավոր է և պետք է իրականացնել առարկայի դասավանդման ընթացքում՝ սկսած 1-ին դասարանից:

Դասավանդման ընթացքում նյութի մատուցումը պետք է լինի ճկուն, հետաքրքիր և հետապնդի սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությանը:

Այս ամենի ճիշտ կիրառումը հնարավորություն է տալիս սովորողին հասնել որոշակի հաջողության և, որ կարևորն է, կարողանա հաղթահարել դժվարություններն ու խոչընդոտները:

Ուսուցիչը պետք է անընդհատ դրական հուզական մթնոլորտ ստեղծի դասաժամին, իսկ դրա համար անհրաժեշտ է ամրապնդել սովորողի վստահությունը իր անձի նկատմամբ: Այս ամենին հնարավոր է հասնել ուսուցչի և սովորողի համագործակցության և փոխադարձ հարգանքի շնորհիվ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ դասավանդման գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության բարձրացմանը:

Դասավանդման ընթացքում համագործակցային մեթոդների կիրառմամբ փոքր քայլերի հաջորդականությամբ սովորողների իրավունքների և արժանապատվության, ազատությունների ու պատվի պաշտպանության կազմակերպումը բերում է սովորողների ինքնագնահատականի բարձրացման, դիմացինի արժանիքների ճիշտ գնահատման և դրա շնորհիվ նաև ուսուցման արդյունավետության բարձրացման:

Գրականության ցանկ

1. Է. Բեկման և Բ. Թրաֆորդ՝Դպրոցների ժողովրդավարական կառավարում՝, 2007
2. ՀՀ երեխայի իրավունքի մասին, /հոդված 11/
3. ՄԱԿ-ի կոնվենցիա երեխայի իրավունքների մասին, /հոդված13, 27/
4. Հանրակրթության պետական չափորոշիչ
5. ՀՀ օրենքը հանրակրթության մասին
6. Гребенюк О.С., Рожков М.И. Общие основы педагогики. М., 2003, с.628
7. hy.wikipedia.org
8. www.unicef.org
9. blog.168.am
10. www.arlis.am